ՋՐԱՂԱՑՆԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀՐԱՉՅԱ ԲԵԳԼԱՐՅԱՆ

Ջրաղացը եղել է Հայաստանի արտադրական կարևոր կառույցներից մեկը։ Հացահատի (ցորեն, գարի, հաճար, կորեկ) գլխավորապես աղացվել է ջրաղացներում։ Ջրաղացի առաջացումը կապվում է ջրի ուժով աշխատող թափանիվի ստեղծման հետ, որը Հռոմում օգտագործվում էր արդեն մ. թ. ա. I դարում։ Եվ ինչպես ցույց են տալիս փաստերը, հենց մ. թ. ա. դարում էլ կառուցվել են առաջին ջրաղացները։ Դեռևս Ցիցերոնի ժամանակաշրջանի բանաստեղծ Անտիպարոսը ողջունում է ջրաղացի գյուտը[1]։ Հռոմեացի ճարտարապետ Մարկոս Վիտրուվիոսը մոտ 16—13 թթ. մ. թ. ա. նկարագրում է ջրաղացը[2]։ Ստրաբոնը (65—25 թթ. մ. թ. ա. նկարագրելով Ֆանարոնը՝ «Պոնտոսի լավագույն մասը», գրում է. «Կաբայրում էին Միհրդաս պալատը, ջրաղացների կառույցները»[3]։ Վկայությունից պետք է ենթադրել, որ այդ ջրաղացները արքունի էին և ունեին սահմանափակ քանակություն։ Դրանք պետք է ժամանակի ամենանշանավոր երևույթներից մեկը եղած լինեին, որպեսզի կառուցվեին թագավորի պալատի մոտ։ Ուրեմն առաջին ջրաղացները Հռոմում են կառուցվել մ. թ. ա. I դարի սկզբներին, իսկ հետո դրան կառուցվածքն ընդօրինակվել է նաև Պոնտոսում և այլուր։

Հայտնի է, որ մ. թ. ա. I դարում Հայաստանը Առաջավոր Ասիայի ամենահզոր տերությունների մեկն էր և մեծ դեր ուներ Հռոմ-պարթևական աշխարհ հարաբերություններում։ Հայաստանի նման հզոր և տնտեսապես զարգացած երկիրը չէր կարող անհաղորդ լինել նաև ջրաղացի գյուտի նկատմամբ։ Հայաստանում ջրաղացների տարածման պատմության լուսաբանման համար կարևոր նշանակություն ունեն Զոդից և Մեղրաձորից ոսկու լվացման տաշտերի հետ հայտնաբերված հանքաքարը մանրելու աղացքարերը, որոնք պահվում են Մեծամոր թանգարանում։ Դրանք պատրաստված են մոխրագույն գրանիտից և բավականին խոշոր չափեր ունեն։ Տրամագծերը տատանվում են 44 սմ—58 սմ-ի միջև։ Աղացքարերի մի մասը, ամենայն հավանականությամբ, հետագայում օգտագործվել է որպես շինաքար։ Այդ է պատճառը, որ դրանք ունեն գրեթե ուղղանկյան ձև։ Պահպանված քարերը, բացառությամբ մեկի, վերևի աղացքարերն են և ունեն թեթևակի կորություն։ Դրանց հաստությունը տատանվում է 7 սմ—16 սմ-միջև։ Վերևի բոլոր քարերի վրա շատ լավ պահպանված են տոփանի կամ տափարակի համար արված փոսիկները, որոնք երբեմն մեկ, երբեմն 2 զույգ են (վերջիններս տափարակը ավելի լավ պահելու համար են)։ Քարերի մեծամասնության շաչխատող մասն անմշակ է։ Աշխատող երեսի վրա արված են շրջանաձև, ինչպես նաև շառավղաձև գծիկավոր փոսիկներ, որոնք սկսվում են անցքից և տարածվում դեպի քարի եզրերը։ Կասկած չի կարող լինել, որ դրանք արվել են հանքաքարը ավելի լավ մանրելու համար։ Ներքևի քարի չափսերն են 67×46×11 սմ։ Պահպանվել է անցքի շուրջը եղած բարձրությունը, որից սահուն կերպով անցում է կատարվում դեպի աղացող մասը, որը 10 սմ է։ Քարի եզրերը դեպի վեր են ուղղված (տախտակ 1, գծ. 1)։ Ամենայն հավանականությամբ, քարերը պատկանում են ուշ անտիկ ժամանակաշրջանին։ Դրանց չափերը բավականին մեծ են ձեռքի ուժով աշխատեցնելու համար, և փոքր՝ ջրաղացի համար։ Դրանք, հավանաբար, գործի են դրվել անասունի ուժով։ Զոդից և Մեղրաձորից հայտնաբերած աղացքարերի աշխատող երեսներին բացի տոփանի փոսիկներից արվել են և այլ փոսիկներ ու գծիկներ հանքաքարի մշակումն ավելի հեշտացնելու համար։ Ավելի ուշ այդ սկզբունքը արդեն լայնորեն օգտագործվում էր ջրաղացներում։ Քարը շուռ տալով, սրածայր մուրճով ծեծում էին նրա աշխատող մասը՝ առաջացնելով ոչ ողորկ մակերես։

---

1 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, Երևան, 1933, էջ 374—375։

2 Марк Витрувий Пиллон, Об архитектуре, десять книг, Л., 1936, с. 305

3 Страбон, География, М., 1879, с. 566—567.

Անասունի ուժով աշխատող աղացը Հայաստանում պահպանվել է ընդհուպ մինչև XI դարը, մինչև ջրաղացի լայն տարածում գտնելը։ Դա երևում է Գրիգոր Մագիստրոսի հետևյալ չափածո տողերից.

Մարդն է գերի մահուան չարի,
Թեև իցէ Սամփսոն արի,
Շրջարերէ որպէս ջորի՝
Աղալ գերկանս ի յաղօրի[4]։



Տախտակ 1.

Հայկական աղբյուրներում ջրաղացները հիշատակվում են սկսած X դարից։ Ջրաղացի մասին ամենահին վկայությունը Թ. Ավդալբեկյանը համարում է Մաղարդավանքի 966 թ. արձանագրությունը. «...Եռու Շամրայ ջաղացներն»[5]։ Ստեփանոս Օրբելյանը, սակայն, վկայակոչում է Սյունյաց Փիլիպպե իշխանին վերաբերող 943 թ. մի այլ արձանագրություն, որի մեջ նշում է, թե նա վանքին է ավել երկու գյուղ «իւր ամենօքդ բոլոր լերամբ և դաշտովք, հողով և օրով, այդոք և ընկուղենօք, ջրաղացուք և ամենայն մտիւք»[6]։ Մի այլ տեղ նույն պատմիչը,

4 «Գրիգոր Մագիստրոսի թղթերը», Ալեքսանդրապոլ, 1910, էջ 241։
5 Թ. Ավդալբեկյան, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 292—293։
6 Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն տանն Սիսական, Մոսկվա, 1861, էջ 196—197։

թվարկելով Տաթևի վանքի կալվածքները, հիշում է «չաղացաձորը»[7]։ Ջրաղացի մասին հաջորդ վկայությանը հանդիպում ենք Դափուց վանքի ս. Գրիգոր եկեղեցու անավարտ արձանագրություններից մեկում, որը Ս. Բարխուդարյանը թվագրում է X դարի վերջով[8]։ Վանեվանի ս. Գրիգոր Նկեղեցու մի արձանագրության մեջ հիշատակվում է շրաղաց շինելը. «Խաչս Ովանիսին շաղաց շինեաց»։ Ս. Բարխուդարյանի կարծիքով արձանագրությունը X դարի վերջին կամ XI դարի սկզբին է պատկանում[9]։ «Ջրաղացպան» տերմինը գտնում ենք Արիստակես Լաստիվերցու մոտ[10]։ Ջրաղացի մասին հնագույն վկայություններ կան նաև Մարմաշենի 1029 թ., Հաղբատի 1086 թ. արձանագրություններում[11]։

Վերոբերյալ վկայություններից պարզ է դառնում, որ շրաղացները Հայաստանում լայն տարածում են գտնում սկսած X դարից։ IX—X դարերում շրաղացները սովորական են դառնում ոչ միայն Հայաստանում, այլև՝ Բյուզանդիայում, Իրանում և այլուր։

Միջնադարյան հայ մատենագրության մեջ եղած տվյալները հաստատում են, որ նախքան շրաղացների երևան գալը ալյուր ստանալու համար գլխավորապես օգտագործվել են երկանքները։ Շահապիվանի ժողովի կանոններից մեկում նշվում է. «Եւ եթէ կնոջն կամաւք իցէ խառնակութիւնն... է տարի աղասցէ գոգեսցն»[12]։ Թ. Ավգալբեկյանը ենթադրում է, որ «գըլխավոր աշխատանքը երկանքով նախ աղուն, ապա ձավար, աղ և այլն աղալն էր»[13]։ Սա խոսում է այն մասին, որ V դարում Հայաստանում դեռևս լայնորեն գործածվում էին երկանքները։

Միջնադարյան շրաղացները եղել են երկու տիպի. 1) շրաղացներ, որոնք ունեցել են ուղղահայաց թափանիվ (տախտակ 1, գծ. 2), 2) հորիզոնական թափանիվ ունեցող շրաղացներ (տախտակ 1, գծ. 3)։

Առաջինի կառուցման սկզբունքը հիմնականում նույնն էր, ինչ որ ներկայացրել է մ. թ. ա. I դարի ճարտարապետ Վիտրուվիոսը։ Լիսեռի վրա ամրացված է մեծ թափանիվը՝ մի այլ ավելի փոքր թափանվի հետ, որի վրա մի կողմից ատամներ կան։ Սրանք շփվում են ուղղահայաց տնկված լիսեռին, որը նույնպես ատամներ ունի և մի ծայրով միացված է վերին աղացքարին։ Ջրի ուժը պտտական շարժում է հաղորդում առաջին անվին և փոխանցման կարգով շարժումը հաղորդում է շրաղացքարին։ Այս տիպի շրաղացքարերն իրենց հերթին ունեցել են երկու ենթատիպ. ա) ներհոսքային անիվներով շրաղացներ և բ) վերհոսքային անիվներով շրաղացներ։ Առաջին տիպին էին պատկանում այն շրաղացները, որոնց մեծ թափանվի ներքևի մասն էր մտցվում շրի հոսքի մեջ։ Դա բնորոշ էր վաղ շրջանի շրաղացներին։ Երկրորդ տիպն ավելի կատարելագործված էր։ Անիվն այս դեպքում տեղավորվում էր այնպես, որ վերևից հատուկ ճնշման խողովակի կամ նավի միջից շուրը հարվածում էր թափանվի թիակներին։ Հորիզոնական անվով շրաղացի կառուցվածքն ավելի պարզ էր ու արդյունավետ։ Ջրաղացի քարերի տակ խոր փոս էր փորվում, որտեղ հորիզոնական դիրքով տեղավորվում էր թափանիվը։ Նավի կամ ճնշման խողովակի ծայրը տեղավորվում էր ձախ կողմում, որպեսզի այն պտտվեր ժամացույցի սլաքի հակառակ ուղղությամբ։ Ջրի ուժը հաջող օգտագործելու համար ճնշման խողովակի ծայրափողի թեքությունը թևերի մակերեսի հետ ուղիղ անկյուն պետք է կազմեր։ Թափանվին միացված սռնին, ներքևի շրաղացքարի անցքի միջով անցնելով միանում էր վերևի քարին։ Սռնու ծայրին հագցվում էր երկաթե տափարակը, որը մտնում էր վերևի քարի մեջ արված հատուկ փորվածքի մեջ։ Թափանվի միջոցով պտտվող սռնին պտտեցնում էր նաև վերևի քարը։ Ջրաղացների ճնշման խողովակները սկզբնապես պատրաստվել են քարից, իսկ հետագայում նաև սնամեջ գերաններից, որոնք ամրացվել են երկաթյա օղերով և ստացել տակառի կամ քառանկյուն ձև։

Ջրաղացների 2 տիպի համար էլ կառուցվածքը համարյա նույնն էր, տարբեր էին թափանիվից քարին պտտական շարժումներ հաղորդելու եղանակները։ Քանի որ շրաղացների երկրորդ տիպն ավելի հուսալի էր ու արդյունավետ, պետք է ենթադրել, որ այն ավելի տա-

---

7 Նույն տեղում, էջ 227։

8 «Դիվան հայ վիմագրության» (այսուհետև՝ «Դիվան»), հ. 4, Երևան, 1973, էջ 18—19։

9 Նույն տեղում, էջ 124։

10 Արիստակես Լաստիվերցի, Պատմություն, Երևան 1971, էջ 42։

11 Թ. Ավդալբեկյան, նշվ. աշխ., էջ 292։

12 «Կանոնագիրք հայոց», հ. Ա., աշխատասիրությամբ՝ Վ. Հակոբյանի, Երևան, 1967, էջ 445—446։

13 Թ. Ավդալբեկյան, նշվ. աշխ., էջ 292։

րածված էր, քան՝ առաջինը։ Ակնհայտորեն ջրաղացի այս տիպն ի նկատի ունի Ներսես Շնորհալին իր հետևյալ հանելուկում.

Մինն ի յանգունդս տառապէր,
Մինն ի յերեսըն թրքանէր,
Գըլխովն ծափս հարկանէր,
Ըզկենարարն մեզ բերէր[14]։

Պարզ երևում է, որ առաջին տողը վերաբերում է փոսի մեջ տեղավորված պտտվող թափանվին, հաջորդը՝ նավին կամ ճնշման խողովակին, որից շուրը ցայտում է թափանվի վրա, իսկ երրորդը՝ պտտվող և աղմկող ջրաղացքարին։

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ջրաղացները միջնադարյան Հայաստանի արտադրական եկամտաբեր հաստատություններից էին և ունեին տնտեսական զգալի նշանակություն։ Միջնադարում ջրաղացներն աշխատում էին կլոր տարին կամ որոշակի սեզոնում։ Դա ամենից առաջ կախված էր ջրի առատությունից, նաև աղունավորների բավարար քանակից։ Ջրաղացները պատկանում էին ֆեոդալներին, վանքերին և մեծատուններին։ Ջրաղացների վերաբերյալ մատենագրական աղբյուրներում, բացի դատաստանագրքերում դրանց օգտագործմանը, առք ու վաճառքին վերաբերող հոդվածներից, այլ տեղեկություններ գրեթե չեն պահպանվել։ Վիմական արձանագրություններում դրանց թիվը զգալի է։ Օգտագործելով մեզ հայտնի հրապարակված վիմագիր աղբյուրները՝ հաջողվեց քաղել շուրջ 4 տասնյակ հիշատակություն։ Ստորև ներկայացնում ենք այդ հիշատակությունների աղյուսակը ժամանակագրական հերթականությամբ՝ նշելով ջրաղացների պատկանելությունը ֆեոդալներին, վանքերին և մեծատուններին (տե՛ս աղյուսակը)։ Աղյուսակը բացահայտում է ջրաղացի տերերի սոցիալական կազմում տեղի ունեցած լուրջ տեղաշարժերը։ Ջրաղացի վերաբերյալ առաջին հիշատակությունից, այն է՝ 943 թ. մինչև 1201 թ. իբրև ջրաղացի տերեր հիշատակված են 4 ֆեոդալ, 5 վանք և 2 մեծատուն։ 1201 թ. մինչև 1571 թ. իբրև ջրաղացի տերեր համապատասխանաբար հիշատակված են 4 վանք 6 ֆեոդալ և 19 մեծատուն։ Ըստ որում, քննությունը ցույց է տալիս, որ այս ժամանակաշրջանում ջրաղացատեր ֆեոդալներն ու վանքերը մտնում էին առևտրի, շուկայական հարաբերությունների, նաև՝ վաշխառուական գործարքների մեջ։

Ինչպես վերը նշվեց, միջնադարյան ջրաղացները եկամտաբեր կառույցներ էին։ Ցուրաքանչյուր աղունատեր պարտավոր էր որոշակի աղունավարձ վճարել։ Մատենագրական տեղեկություններից դատելով՝ վարձի չափն առաջին հերթին կախված էր նրանից, թե որտե՞ղ էր գտնվում ջրաղացը, ի՞նչ հզորություն ուներ, շուրն առա՞տ էր, թե՞ ոչ։ Աղունավարձի մասին հոդվածներ ունեն թե՛ Մխիթար Գոշը և թե՛ Սմբատ սպարապետը։ Գոշը սահմանում է. «Այլ վարձն ի զավառաց զանազանին, բայց փոփոխութիւն ի նուազութենէ հացի և ջրոյ կամ յառավելութենէ։ Եվ այդ սահման լիցի դատաստանի»[15]։ Ի տարբերություն Մխիթար Գոշի հոդվածի, որտեղ աղունավարձի չափը կախված է հացի և ջրի առատությունից կամ սակավությունից, Սմբատ սպարապետի հոդվածում այն կախված է երկրի սահմանից և ջրի ու ջրաղացի ուժից. «...զկապըճկերն (աղունավարձը—Հ. Բ.) ըստ երկրին սահմանին այնեն, եւ ըստ ջաղացն եւ ըստ ջրին ուժոյն»[16]։ Աղունավարձը կարող էր տրվել և՛ դրամով, և՛ բնամթերքով։ Ջրաղացի տիրոջ և աղունատիրոջ հարաբերությունները սահմանող հոդվածներ ունեն թե՛ Մխիթար Գոշը և թե՛ Սմբատ սպարապետը։ Գոշն, օրինակ, հոդվածի սկզբում զգոնության է կոչում ջրաղացպաններին. «Եվ ջրաղացպանք փորձք լիցին արուեստի ամենայն կազմուածոյ, զի մի բազմատանջն ապականեսցին զկերակուր աներկեղութեամբ։ Այնպիսի վնասողացն դատաստանաւ է ոչ վարձել, այլ զվնասն եւս տուժել.—և ապա շարունակում.—ապա թէ պատճառն ի գիճութենէ՝ աղանին իցէ, անպարտք լիցին, իսկ ի շուր դաղացեալն վճարիցեն։ Այլ դողացեալն՝ չորեքկին, եւ ի կոփողացն յանդիմանութիւն լիցի նշավակաց։ Այլ թե աղացողն աւելի, քան զպատրաստեալն, ի վեր և ի խոնարհ արասցէ, վճար առ ի նմանէ լիցի, զի ասել

---

14 Ներսես Շնորհալի, Հանելուկներ, Երևան, 1968, էջ 37։

15 Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի (այսուհետև՝ Մխիթար Գոշ), Երևան, 1975, էջ 150, 413։

16 Смбат Спарапет, Судебник (այսուհետև՝ Смбат Спарапет), Ереван, 1958, с. 172.

ի դեպ էր պատրաստողին եւ ոչ իւր համարձակիլ»[17]։ Հետաքրքիր է, որ հոդվածի մեջ խստորեն զատորոշված են թե՛ շրաղացպանների և թե՛ աղունատերերի իրավունքներն ու պարտականությունները։ Այսպես, եթե ալյուրի վատ լինելու պատճառը ալյուրի խոնավ լինելն էր, շրաղացատերը պատասխանատու չէր։ Իսկ եթե շրաղացի անսարքության պատճառով ալյուրը ներքևի քարից ցած՝ շրի մեջ թափվեր, շրաղացատերը պարտավոր էր վճարել. «...իսկ ի շուր ղաղացեալսն վճարիցեն»։ Այդ մասին հիշատակում է նաև Սմբատ սպարապետը «Վասն շաղ-ցրպներոյ» հոդվածում. «Ու թե անցնել տայ ընդ քարն՝ միատակ վճարէ տէրն...»[18]։ Աղունը

Աղյուսակ

№	Գտնվելու վայրը	Ժամանակը	Պատկանելությունը		
			Ֆեոդալ	վանք	մեծատուն
1	Տաթեւի վանք	943 թ.	1	—	—
2	Մաղարթա վանք	966 թ.	1	—	—
3	Կոշ	981 թ.	1	—	—
4	Գափուց վանք	X դ. սկ.	—	1	—
5	Արթիկի շրջ. Նոր կյանք գյուղի եկեղեցի	1010 թ.	—	—	1
6	Տաթեւի վանք	1006 թ.	—	1	—
7	Վանեվանի ս. Գրիգոր	1011 թ.	—	1	—
8	Մարմաշեն	1029 թ.	1	—	—
9	Հաղրատ	1086 թ.	—	1	—
10	Հաղբատ վանք	1201 թ.	—	1	—
11	Հոռոմոս	1201 թ.	—	—	1
12	Հաղրատ	1210 թ.	1	—	—
13	Հայրավանք	1211 թ.	1	—	—
14	Հայրավանք	1215 թ.	—	—	1
15	Սանահին	1215 թ.	—	—	1
16	Արդանիշ	1216 թ.	—	—	1
17	Մարմաշեն	1225 թ.	1	—	—
18	Մորո ձորո վանք	XII դ. վերջ	—	1	—
19	Բաղարան	XIII դ. սկ.	—	—	1
20	Մեծքրանից ս. Հակոբա վանք	XIII դ. սկ.	—	—	1
21	Հայրավանք	XIII դ. սկ.	—	—	—
22	Նորավանք	1251 թ.	—	1	1
23	Կարմիր վանք	1266 թ.	—	—	1
24	Հոռոմայր	1271 թ.	—	—	1
25	Ծաղկավանք	1284 թ.	—	—	1
26	Վարդենիսի շրջ. ս. Աստծին եկեղեցի	1284 թ.	—	—	1
27	Հոռոմայր	1290 թ.	—	—	1
28	Ամաղուի Նորավանք	1273—1293 թթ.	—	1	—
29	Տաթեւի վանք	XIII դ.	—	1	—
30	Զրվշտիկի վանք	XIII դ.	1	—	—
31	Անիի Զաքարեի եկեղեցի	XIII դ.	1	—	—
32	Հոռոմոս	XIII դ.	—	—	1
33	Բաղնայր	XIII դ.	—	—	1
34	Բաղնայր	XIII դ.	—	—	1
35	Լիանոսի վանք	XIII դ. վերջ	—	—	1
36	Ծար-Զառ (այժմ Աղբ. ՍՍՀ Իսախսու առողջարան)	XIV դ. սկ.	—	—	1
37	Գառնի	1315 թ.	—	—	1
38	Նորաղուդ	1344 թ.	—	—	1
39	Թանատի վանք	XIV դ.	1	—	—
40	Նղվարդ	1471 թ.	—	—	1

[17] Մխիթար Գոշ, էջ 150։
[18] Смбат Спарапет, с. 125.

կամ այլուրը գողանալու դեպքում ջրաղացպանը պետք է քառակին վճարեր։ «Եւ ի կոփողացն յանդիմանութիւն լիցի նշավակաց» արտահայտությունը ցույց է տալիս, որ հսկողություն էր իրականացվում ջրաղացների և գրանցում տիրող փոխհարաբերությունների վրա։ Բ. Առաքելյանի կարծիքով կոփիչները կամ կոփողները քաղաքային արտադրության ու շուկայի հսկիչներն էին և ունեին նաև ոստիկանական ֆունկցիաներ։ Նրանք հսկում էին ոչ միայն շուկաների, այլև քաղաքի արտադրական և հասութաբեր հաստատությունների վրա[19]։ Նշված հատվածներում կոփիչները հանդես էին գալիս զուտ հսկող ֆունկցիաներով։ Ջրաղացի մասին Մխիթար Գոշի հոդվածի հետաքրքիր կետերից մեկն էլ հետևյալն է. «Այլ թե աղացողն ավելի, քան զպատրաստեալն, ի վեր և ի խոնարհ արասցէ զքար ջրաղացին և վնաս ինչ արասցէ, վճար առ ի նմանէ լիցի...»։ Հասկանալի է, որ աղունատերը ջրաղացի ոտքը, վերև և ներքև պետք է աներ, որպեսզի այլուրը որքան հնարավոր է մանր ստացվեր։ Իսկ քարերի չափից դուրս մոտեցնելն իր վտանգն ուներ. դրանք կարող էին մաշվել, փչանալ։ Ահա թե ինչու Մխիթար Գոշն իր հոդվածում հիշատակում է նաև այդ կետը։

Միջնադարյան Հայաստանում ջրաղացները տարածված էին թե՛ քաղաքներում և թե՛ գյուղերում։ Ջրաղացները եղել են առք ու վաճառքի առարկա։ Մխիթար Գոշը և Սմբատ սպարապետը հոդվածներ ունեն նաև ջրաղացներ գնողի և վաճառողի հարաբերությունները պարզաբանելու վերաբերյալ։ Եթե Գոշի հոդվածը աղքատության պատճառով ջրաղացի վաճառքի մասին է, ապա Սմբատ սպարապետի հոդվածը վերաբերում է ջրաղացների վաճառքին ընդհանրապես։ «Յաղագս դատաստանեաց ջրաղացաց» հոդվածում Մխիթար Գոշը սահմանում է. «Եւ յաղագս աղքատութեան վաճառեալ ջրաղացք զամ մի ընդ փրկանաւ լիցին ինքեանց եւ ազգականաց իսկ այլազգ ի նմին ամի հաստատեսցի»[20]։ Իսկ Սմբատ սպարապետն իր հոդվածում գրում է. «Վասն ջաղցնոյ եւ այլ այլնցեզ իրաց, երբ գնէ ոք վկայաւք և հաստատէ թղթով նա չկարէ փաւշմանիլ ոչ գնաւղն եւ ոչ ծախաւղն, քանց ամէն կազմութեամբն գնաւղին է թե շահի և թե վզենկի, թե կոտրի թե ույրի նույնպէս եւ նաւ է, թե տուն, թե զինչ ու լինի իրք ու թե զողնվի իրք՝ նա նույնպես գնաւղին է»[21]։

Միջնադարյան Հայաստանում ջրաղացից գանձվել են որոշակի հարկեր։ Անիի Առաքելոց եկեղեցու արձանագրություններից մեկում նշվում է. «...Իս Մխիթար որդի Գրիգոր Խուցիսին որ Անոյ տամղաճի էի... Թողի զջաղացանոյս ամէնոյ զդամղէն եւ զդահեկ...»[22]։ Բերված արձանագրության մեջ հիշվում են երկու հարկեր՝ դամղան կամ տամղան և դահեկը։ Գառնիի 1315 թ. արձանագրության մեջ հիշվում է նաև ջրաղացից գանձվող մի այլ հարկի՝ «ջրաղացի մահկանայիս» մասին, որը վերացվել է[23]։ Քննարկելով Անիի Մանուչեի մզկիթի վրա եղած պարսկերեն արձանագրությունը, Վ. Բարտոլդն այն կարծիքն է հայտնում, որ «տամղա» անվան տակ հասկացվել են բոլոր հարկերը, որոնք գանձվել են սկսած առևտրա-արտադրական ձեռնարկություններից մինչև հասարակական տները։ Նա գտնում է, որ տամղան եղել է գանձարկղի ամենակարևոր եկամուտներից մեկը[24]։ Վ. Բարտոլդի այդ միտքը հաստատում է նաև Գառնիի 1315 թ. արձանագրության մի այլ հավաստումն այն մասին, որ տամղատարները վերացրել են ոչ միայն ջրաղացի մահկանան, այլև՝ «զհասարակաց գինո և զամենայն ցեղ վաճառքի տամղան»[25]։ Այլ ուսումնասիրողներ «տամղա» հարկը բացատրում են որպես. 1) խարանադրոշմ, որը խարանվում էր անասունների մարմնի վրա, 2) մաքսի նշանակությամբ ապրանքների փոխադրման համար գանձվող հարկ[26]։ Հր. Աճառյանը գտնում է, որ «տամղա» բառն առաջացել է թուրքական tamγa (տամղա)-դրոշմ բառից[27]։ Հետաքրքիր է այն փաստը,

---

19 Բ. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դարերում, հ. 2, Երևան, 1964, էջ 216—217։

20 Մխիթար Գոշ, էջ 70։

21 Смбат Спарапет, с. 125.

22 «Դիվան», հ. 1, Երևան, 1966, էջ 28։

23 Բ. Առաքելյան, Գ. Կարախանյան, Գառնի 3, Երևան, 1962, էջ 46։

24 В. Бартольд, Персидская надпись на стене Анийской мечети Мануче, Анийская серия № 5, СПб., 1911, с. 216.

25 Բ. Առաքելյան, Գ. Կարախանյան, նշվ. աշխ., էջ 46։

26 Абдул-Карим Ализаде, Социально-экономическая и политическая история Азербайджана XIII—XIV вв., Баку, 1956, с. 216.

27 Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ «Արմատական բառարան»), հ. 3, Երևան, 1973, էջ 367։

որ Ղ. Ալիշանը տամղաճիներին կոչում է «կնքահար» կամ «ոստիկան համարեալ չափուց և կշռոց»[28]։ Անդրադառնալով նշված տերմինի բացատրությանը՝ Բ. Առաքելյանը նշում է, որ տամղա նշանակում էր խարան կամ կնիք դնել. «քանի որ կնիք էր դրվում հարկադրված իրի կամ առարկայի վրա»։ Այնուհետև նա ավելացնում է, որ այս հարկը հնում միավորված է եղել բաժի հետ, սակայն քաղաքների և արհեստների զարգացման հետ տարբերակվել է բաժից, հանգես եկել որպես առանձին հարկ և գանձվել է զանազան հասութաբեր հաստատություններից, այդ թվում նաև շրաղացներից[29]։ Դատելով այս ամենից՝ կարելի է ենթադրել, որ տամղան շրաղացից գանձվող եկամտահարկն էր։

Շրաղացից գանձվող կարևոր հարկերից մեկն էր գահեկը։ Այն հիշատակվում է Անիի Առաքելոց եկեղեցու զավթի արձանագրության մեջ, ըստ որի Գրիգոր Խուցիսի որդի Մխիթարը թողել է «ղշաղացանոյս ամենոց զդամղէն եւ զգահեկ»։ Երկու անգամ այն հիշվում է Քանաքեռի որմնափակ խաչարձանի հարավային պատին «ղէկ» և «գահիակ» ձևերով և վերջապես Երևանի Կաթողիկե հուշարձանի հյուսիսային պատին՝ «գահիաք» ձևով։ Հր. Աճառյանը բառը մեկնում է իբրև «տասանորդ» և նշում, որ ծագել է պարսկերեն dahyak «տասանորդ»՝ տասից մեկը, կազմված է yak-մեկ և dah-տասը բառերից[30]։ Տերմինը քննարկել է Ս. Ավագյանը և նշել, որ առաջին դեպքում «գահեկը» տուրքի անվանում է, որ առնվել է եկամուտի, տվյալ դեպքում՝ շրաղացի հասույթի տասանորդ մասից, քանի որ հիշատակվում է շրաղացների մյուս հարկի՝ տամղայի հետ միասին։ 2-րդ արձանագրության մեջ այն նշանակում է վաճառքի ընդհանուր գումարի տասանորդը, իսկ երրորդում ասվում է, որ Երևան քաղաքի տեր Սահմադինը օրենք է հրապարակում, որով սեփականության առուծախի դեպքում պարոնին պետք է տրվի ընդհանուր արժեքի մեկ տասանորդը՝ գահիակը[31]։

Հավանական է, որ շրաղացից գանձվող գահեկը նրա եկամտի $^1/_{10}$ մասն էր։ Ինչպես տեսնում ենք, բերված օրինակներում գահեկն ընդհանրապես տասանորդ է նշանակում։ Հետևաբար, պետք է ենթադրել, որ շրաղացից գանձվող գահեկը նրա եկամուտի $^1/_{10}$ մասը՝ տասանորդը, պետք է լիներ։

Շրաղացներից գանձվող 3-րդ հարկը մահկանան էր։ Քննարկելով տերմինը՝ Բ. Առաքելյանը այն կարծիքն է հայտնում, որ այդ հարկը գանձվել է սկսած IX—X դարերից և մոնղոլական ժամանակաշրջանում հայտնի էր «մահկանել» անվամբ[32]։ Գր. Գրիգորյանը գտնում է, որ մահկանան շրաղացից գանձվող ամսական տուրքն էր, որ վճարում էին շրաղացի տերերը ֆեոդալին[33]։

Շրաղացից գանձվող մյուս հարկը խարաշն էր։ Այդ հարկը հիշատակվում է Շիրակավանի 1231 թ. մի արձանագրության մեջ «զխարաճ շաղշաց» ձևով[34]։ Խարաշը, ամենայն հավանականությամբ, Հայաստանում հաստատվել է սկսած VII դարից՝ կապված արաբների ներխուժման և երկիրը հարկադրելու հետ։ Արաբ պատմիչ Աբու-Յուսուֆը հաղորդում է, որ խարաշն ու գլխահարկը հավասարազոր են միմյանց։ Գլխահարկն ապահովում էր անձի, խարաշը՝ ունեցվածքի անձեռնմխելիությունը[35]։ Թերևս XIII դարում խարաշն արդեն ուներ ավելի շատ եկամտահարկի իմաստ։ Հավանական է նաև, որ խարաշն այդ ժամանակ անջատվել էր գլխահարկից և շրաղացներից գանձվում էր որպես դրանց անձեռնմխելիությունը ապահովող երաշխիք։ Ընդհանրացնելով՝ կարելի է ասել, որ շրաղացից գանձվել են հետևյալ հարկերը՝ տամղան, մահկանեն, գահեկը և

---

28 «Շիրակ, Տեղագրութիւն պատկերացոյց», հավաքեաց Հ. Ղեւոնդ Վ. Ալիշան, Վենետիկ—Ս. Ղազար, 1881, էջ 101։

29 Բ. Առաքելյան, նշվ. աշխ., հ. 2, էջ 216—217։

30 «Արմատական բառարան», հ. 1, Երևան, 1971, էջ 615։

31 Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքննություն, Երևան, 1973, էջ 58—63։

32 Բ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 277—278։

33 Գր. Գրիգորյան, Դիտողություն միջնադարյան մի տուրքի մասին («Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 2, էջ 263)։

34 «Վիմական տարեգիր ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց», կազմեաց Կ. Կոստանեանց (այսուհետև՝ «Վիմական տարեգիր»), Ս. Պետերբուրգ, 1913, էջ 74։

35 Վ. Վարդանյան, Վասպուրականում գանձվող խարաշի ու գլխահարկի մասին («Պատմա-բանասիրական հանդես», 1976, № 2, էջ 145)։

խարայը։ Ակներևաբար, դահեկը ջրաղացից գանձվող տասանորդն էր։ Ամսահարկի ձևով ջրաղացից գանձվող տամղան, հավանաբար, կոչվել է մահկանէ կամ մահկանա։ Քանի որ ջրաղացը կարող էր ամբողջ տարին չաշխատել կամ տարբեր ամիսների տարբեր եկամուտներ ունենալ, տամղաճիները տամղան գանձում էին ամսե-ամիս՝ մահկանայի ձևով։

Հարկ է նշել, որ ջրաղացներից միշտ էլ հարկեր են գանձվել, սակայն դրանք որոշ հարկատեսակներից ազատ են եղել։ Այդ մասին է խոսում, օրինակ, Մխիթար Գոշի դատաստանագրքի հետևյալ հոդվածը. «զանդաստանայն զհինգերորդ մասն առցեն, որպէս Յովսէփ աւրինադրեց Եգիպտոս... Սոյնպես եւ այժմ լիցի. զի արծաթագին անդաստան, եւ այգեստան եւ բաւրաստան մի լիցի հարկաւ հնգեկին, նմանապէս՝ ջրաղաց եւ տուն»[36]։ Բ. Առաքելյանը, անդրադառնալով այդ հարցին, գտնում է, որ մասնավոր հողերից, այգիներից (նաև ջրաղացներից) պետությանը կամ սենյորին վճարում էին տասանորդ, այսինքն հնգեկի կեսը, քանի որ եկամտի մի տասանորդն էլ, այսինքն՝ մյուս կեսը, անցնում էր անմիջական տիրոջ ձեռքը[37]։ Այս ենթադրությունը մի անգամ էլ ապացուցում է, որ ջրաղացից գանձվող դահեկը նրա եկամտից գանձվող տասանորդն էր, և ջրաղացից գանձվել է ոչ թե հնգեկ, այլ դահեկ։ Ջրաղացները հնգեկից ազատելու մասին է վկայում նաև Սմբատ սպարապետի հետևյալ հոդվածը. «Եւ է ընդորդ հարկուն սահմանն այս, որ զինչ Աստուած տայ հարկատուին, ի հնկեն մեկն է։ Ջրաղացք և այսպիսի շինուածք ազատ է...»[38]։ Եթե Գոշը հնգեկից ազատ է համարում արտադրական կառուցվածքներից միայն ջրաղացը, ապա Սմբատ սպարապետը հնգեկից ազատում է նաև նմանատիպ այլ կառույցները։ Հավանաբար, խոսքն այստեղ վերաբերում է նաև ձիթհաններին, հնձաններին, բաղնիքներին և հասարակական ու արտադրական այլ կառույցներին։

Ջրաղացներն առք ու վաճառքի առարկա լինելուց բացի միջին դարերում նաև կապալով էին տրվում։ Գառնիի Սունպենց վանքի մի արձանագրության մեջ հաղորդվում է, որ ջրաղացատեր Ստեփաննոս Հովհաննիսյանցը իր ջրաղացը 3 օր վարձով է տվել վանքին, որի դիմաց նրան տրվել է երկու պատարագ[39]։ Խոսելով արճիշեցի Աստվածատուր վարդապետի մասին՝ Գանձակեցին նշում է, որ հոր մահից հետո նա իր բազում կուղպակները վարձով տվեց և ամեն տարի դրանց վարձը վերցնելով՝ գնում էր ոչխարի մորթիներ, կտավ ու տալիս էր աղքատներին[40]։ Կապալի վերացման մասին է հիշատակվում Լոռե բերդ-ամրոցից գտնված մի արձանագրության մեջ. «...ու թողի զկորկոտարրոցի... արրոցին կաբալն»[41]։ Մաքենյաց Աստվածածին շինող սյունյաց Սուփան իշխանը իր արձանագրության մեջ հիշատակում է, որ վանքին բազմաթիվ այլ նվերների հետ տվել է նաև «... եւթն հարիւր դրամ ի Դեղձանագետոյ դապալէն, երկու հարիւր դրամ Կաթկայ, երեք հարիւր լիսուն յԱնմեռէն, որ լինի ՌՄԾ դրամ»[42]։ Հր. Աճառյանը «կապալ» բառը բացատրում է որպես «տուրք, վարձք, կաշառք»[43]։ Թ. Ավդալբեկյանը նշում է «կապալ» բառի գործածության երեք հիմնական առումներ. «1) Այն վաճառքը, որին մենք ասում ենք սոսկ վարձ, օրինակ խանութի վարձ։ 2) Կապալ նշանակում է կալութավարձ (арендная плата)։ 3) Բուն կապալ (подряд)»[44]։ Մխիթար Գոշը հոդված ունի ջրաղացները կապալով տալու վերաբերյալ, որը բերում ենք ստորև. «Յաղագս դատաստանեաց ըստ գլխոյ հատուցմանց ջրաղացոց եւ այլոց այսպիսեաց. Եվ զայսպիսիս ըստ գլխոյ առեալ վկայիւք հաստատիցէ։ Շահիլն անգեղջ իցէ տուողին եւ մի տացէ փոխանակ շահի տուգանս։ Եւ իւր լիցի պատրաստեալ զկազմածն ամենայն եւ վնասք՝ ըստ կարգի իրացն եղեալ, իսկ յանպատրաստութենէ եղեալ առողին լիցի՝ ի քար, ի նաւ, երկաթ եւ յայլն ամենայն եւ դողացեալն։ Իսկ այրեալն, եթէ ի պատճառս տեառն լիցի, եւ եթէ ի պատճառս առողին՝ նմա լիցի։ Ըստ այդմ դատիցի եւ այլ ամենայն այդպիսիս, որ ինչ միանգամ եւ իցէ...»[45]։ Բերված փաստերը ցույց են տալիս, որ եկամտի կարևոր աղբյուր հանդիսացող ջրաղացները, ձիթհանները, ձրկ-

---

36 Մխիթար Գոշ, էջ 31։

37 Բ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 226։

38 Смбат Спарапет, с. 13.

39 Հ. Պետրոսյան, Գառնիի մի քանի արձանագրությունները պատմահնագիտական առումով (XIII—XIV դդ.) («Վրաբեր հասարակական գիտություններից», 1982, № 11, էջ 69)։

40 Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Երևան, 1982, էջ 135—136։

41 Ս. Ավագյան, նշվ. աշխ., էջ 146—147։

42 «Վիմական տարեգիր», էջ 5։

43 «Արմատական բառարան», հ. 2, էջ 21։

44 Թ. Ավդալբեկյան, նշվ. աշխ., էջ 298։

45 Մխիթար Գոշ, էջ 72։

նորաարաննները ժամանակավորապես վարձակալության էին տրվում և բերում կապալ, որից և բաժին էին հանում նաև եկեղեցուն։ Եթե վանքերը կարող էին ջրաղացները վարձակալել պատարագների միջոցով փոխհատուցելով, ապա աշխարհիկ ֆեոդալները վճարում էին դրամով և բնամթերքով։ Սմբատ սպարապետը խիստ օրենք ունի վարձակալների մասին, որով սահմանվում է, որ կապալավարձը պետք է վճարվի անմիջապես, այլապես կապալով տրված ջրաղացները, կրպակները և նման տիպի այլ կառույցները ենթակա են վերադարձվելու։ Իսկ վճարի հետաձգումը կարող էր լինել միայն տիրոջ համաձայնությամբ։ «Ապա ջրաղացք եւ խանութք եւ հայնց իրք, որ կապալ բերէ նա, չէ պատեհ, որ յիմէ վճարն, ապա վճարէ կամ մենակ զարձցնէ, քաւել թէ տիրոջն կամաւք լինի յիմելոյն պոմաննն»[46],

Ջրաղացներն ու նմանատիպ կառույցները կապալով տալուց բացի նաև գրավ են դրվել։ Անիի մեծահարուստ Տիգրան Հոնենցը 1215 թ. Բեխենց վանքին տված իր նվերների շարքում հիշում է «...և այլ բաղում գրաւկնած էր, զոր ոչ արձանագրեցի վանացս էի տվել ու թե տերքն թափեն ոսկին վանացս...»[47]։ Մխիթար Գոշն իր «Ցաղագս դատաստանաց գրաւից» հոդվածում սահմանում է. «Եթէ ոք ի գրաւ առնուցու զուրաւք զտուն, կամ զայգի, կամ զհող, կամ զայլ ինչ այսպիսի, եւ պատահի յամիլ (վճարն ուշացնել—Հ. Բ.) զգլուխն որքանուք առեալ անվաշխ՝ անդրէն զարձուցանէ զգրամն։ Եւ թէ աւելի կերեալ, եւ զայն եւս հատուսցէ։ Եւ զոր ինչ ծախեալ իցէ նմանէ, ի գլուխ իւր համարիցի, յորժամ յաղագս անձեռնահասութեանն տեառն լիցէ դարմանեալ զգրաւ իւր»[49]։ Թեև հոդվածում նշված չէ ջրաղացի մասին, բայց պարզ է, որ խոսքը վերաբերում է նաև ջրաղացներին և նմանատիպ այլ կառույցներին։ Հոդվածի մեջ նշված «գլուխ» տերմինը պետք է հասկանալ որպես գրավի դիմաց վերցված գումար, որն առանց տոկոսների ետ էր վերադարձվում գրավն ամբողջությամբ ետ ստանալուց հետո։ Ջրաղացների գրավ գնելը հաստատում է Հոռոմոսի վանքի 1215 թ. մի արձանագրություն, որի մեջ Հովհաննես Ծխիկը հայանում է. «Ցեռ ավիրման Տաթարիս վանացս ջաղացանիս աւեր եւ գրաւական էր»[49]։ Գրավի ժամկետը լրանալուց հետո ջրաղացի մի մասը պատկանում էր գրավ վերցնողին, և նա դառնում էր գործատեր։ Շատ հաճախ, գրավ վերցնելով, մեծահարուստները համոզված էին լինում, որ գրավ դնողն այլևս չի կարողանա ետ գնել դրված գրավը։ Դա շատ լավ երևում է Տիգրան Հոնենցի 1215 թ. վերը բերված արձանագրությունից։

Ինչպես նշվեց, ջրաղացները եկամտաբեր հաստատություններ էին։ Թ. Ավդալբեկյանը հաշվում է, որ XIII—XIV դարերում մեկ պատարագն արժեր մոտ 20—25 դահեկան[50]։ Իսկ Սամպենց վանքի վերը նշված արձանագրության մեջ հաղորդվում է, որ շաբաթական 3 օր ջրաղացը վանքին տրամադրելու համար նրա տիրոջը հատկացվել է երկու պատարագ տարվա մեջ, որը հավասար է մոտ 40—50 դահեկանի։ Վիմական արձանագրությունների տվյալներից երևվում է, որ XIII—XIV դդ. ջրաղացի մեկ աչքը արժեր մոտ 40—50 դահեկան[51], Մեծիրանից ս. Հակոբա վանքի արևմտյան եկեղեցու 1293 թ. մի արձանագրության մեջ նշվում է, որ Հեչքի որդի Մուշեղը գնել է «զչեղացա ակն» և ավել վանքին, որի համար նրան տրվել է «...ի տարումն «։Բ։ ժամ» Առաքելոց տաւնին»[52]։ Հայրավանքի XIV դարի արձանագրություններից մեկում նշվում է, որ Բուրթէլ իշխանի որդիներ Բեչքէնն ու Ինանիկը վանքին են տվել մի ջրաղաց և ստացել մի ժամ զատկին[53]։ Մեծիրանից ս. Հակոբա վանքի մի այլ արձանագրություն հաստատում է, որ Վախթանգի որդի Զաքարեն տվել է «զջաղացն Մխիթարայ հոգոյն» և ստացել է «։Ջ։ ժամ»[54]։

---

46 Смбат Спарапет, с. 120.

47 «Դիվան», հ. 1, էջ 63։

49 Մ խ ի թ ա ր Գ ո շ, էջ 66։

49 «Վիմական տարեգիր», էջ 95։

50 Թ. Ա վ դ ա լ բ ե կ յ ա ն, նշվ. աշխ., էջ 336։

51 Հարկ է նշել, որ հաշվումները մոտավոր են, քանզի տարբեր դարերում ու շրջաններում պատարագները տարբեր արժեք են ունեցել։ Մեր հաշվարկները սոսկ XIII—XIV դդ. ջրաղացների մոտավոր եկամուտը և գինը ցույց տալու փորձ են և չեն հավակնում վերջնական պատասխան տալ այդ հարցին։

52 «Դիվան», հ. 5, էջ 16։

53 «Դիվան», հ. 4, էջ 71։

54 «Դիվան», հ. 5, էջ 20։

Այսպիսով, միջին դարերում ջրաղացները, լինելով եկամտաբեր կարևոր հաստատություններ, արտացոլում էին հասարակության սոցիալ-տնտեսական հարաբերությունների առանձին էջերը և այն տեղաշարժերը, որոնք կրում էին ոչ թե մասնակի, այլ համընդհանուր բնույթ։ Մեծատունների հասարակական խավի աճին համապատասխան եկամտի աղբյուրները աստիճանաբար անցնում են քաղաքային առևտրա-վաշխառուական վերնախավի ձեռքը։ Այդ իրողությունն առավել ցայտուն կերպով տեղի է ունեցել սելջուկյան տիրապետությունից Հայաստանի ազատագրության և Զաքարյանների իշխանության կազմավորման ժամանակաշրջանում, մի իրողություն, որն ակնհայտորեն իրական է գալիս նաև ջրաղացների տերերի սոցիալական կազմի փոփոխությամբ։

МЕЛЬНИЦЫ В СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ

ГРАЧЯ БЕГЛАРЯН

Резюме

Мельницы были значительными производственными строениями ь средневековой Армении, являясь в то же время важными прибыльными предприятиями, отражающими различные стороны социально-экономических отношений общества и те перемены, которые носили не частный, а общий характер. Кроме того, что с мельниц взимались многочисленные налоги «тамга» *(տամղա)*, «макана» *(մահկանա)*, «даек» *(դահեկ)* и «харадж» *(խարաջ)*, они сдавались также в аренду.